ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«30» 01 2023թ.
№ ԿԼԵՄ/2-123

«Կոնստանտ Շին» ՍՊԸ-ի (06958457)
տնօրեն Դ. Մալխասյանին
հասցե՝ ՀՀ .ք. Ստեփանավան, Մեսրոպյան 5/7
հեռ. 093 79 23 23

ՀՀ պաշտպանության նախարարության և «Կոնստանտ Շին» ՍՊԸ-ի միջև 19.08.2022թ. կնքված N ՓԳՀԱՊՁԲ-22-20/6-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և այդ պայմանագրին կից 29.09.2022թ. կնքված N 1 համաձայնագրի շրջանակներում «Կոնստանտ Շին» ՍՊԸ-ն մինչև 2022թ. նոյեմբերի 11-ը պետք է մատակարարեր 15000 հատ Բետոնե սալիկներ /երկաթբետոնե կոնստրուկցիա 8x7x240սմ/, սակայն «Կոնստանտ Շին» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում չի մատակարարվել 8092 հատը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հունվարի 27-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Կոնստանտ Շին» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 420784 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը միաժամանակ ձեռնարկում է միջոցներ՝ «Կոնստանտ Շին» ՍՊԸ-ի

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումների գանձման ուղղությամբ, որոնք համապատասխանաբար կազմում են 6 000 000 ՀՀ դրամ և 4 855 200 ՀՀ դրամ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ